

կից ալ էին իրարու. կ'ուզեմ ըսել տոհմային բնիկ կամ եկամուտ կոչումներն ու սպասուց ձեւերը, եւ նոյն ինքն Հայոց մէջ, թէեւ ազոնք ուրիշ ազգերու շատ աւելի հին սպասները թարգմանեն:

Աղոցմէ ոմանք Ե դարէն վերջ այլ եւս անծանօթ կը մնան. ինչպէս կանոյր (աստ, 25), հադադակ (29), սկան (70), դաշխոռաս (72), պատմակ (75), պտակ (77) եւ այլն: Ինչ եղան ասոնք. արդեօք ընկան սովորութենէ՝ իրենց անուններով հանդերձ՝ Հայաստանի վրայ տիրող ցեղերու յաջորդական ազդեցութեան ներքեւ:

Ընդ հակառակն մեծ մաս մը շարունակեց պահել միշտ իւր գոյութիւնը՝ հին անուանակոչութեամբ միասին. ինչպէս կարաս (աստ, 24), կռժ (27), րոնիր (34), կարսայ (37. Նար. 161), սակ (38. Մագ. 214), պոյակ (38), տապակ եւ շամփոռ (41. Մագ. 214), պայռակ (44. ՅՆ. կթգ. 143) եւ այլն, որոնք կամ յայտնապէս յիշատակուած են նաեւ միջին դարերուն, եւ կամ անյիշատակ մնալով հանդերձ՝ մինչեւ մեր օրերն հասեր են: Եթէ ասոնք ըստ էութեան անփոփոխ մնացած են ձեւով, չենք կրնար նոյնը հետեւցնել նաեւ մանրամասնութեանց նկատմամբ. զի ահա կժիկ կրկին ձեւեր տեսանք իրարու շատ